ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"1" հունիսի 2015թ. № 74-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի ՆԻՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման մասին» N 762 որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 2013 թվականի ապրիլի 23-ի <<Սյունիքի ներմարզային երթուղիներում ընդհանուր օտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>> N 57-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 26-ի նիստի N 1 արձանագրության, **ո ր ո շ ու մ ե մ՝**

1.Հաստատել Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային մարզային հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 26-ի N 1 նիստի արդյունքները՝ համաձայն հավելվածի:

2. <<Գորիս-Խնձորեսկ-Ն.Խնձորեսկ>> երթուղու սպասարկման ժամկետ սահմանել երեք տարի:

3. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ. հունիսի 1
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի 2015 թվականի
հունիսի 1-ի N 74 -Ա որոշման

Արձանագրություն N 1

ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 26 մայիսի 2015 թվականի N 1 նիստի

Օրակարգում – ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով 2015 թվականի մայիսի 25-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի թվով հինգ անդամներ և նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ Վ.Դավթյանը:

Լսեցին – ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով 2015 թվականի մայիսի 25-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:
/ Զեկ. Ս. Աղաբեկյան/

Ուսումնասիրելով կայացած մրցույթի ընթացքում մասնակցի ներկայացրած հայտը և գնահատելով մրցույթին ներկայացված տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակները մրցութային հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաղթող ճանաչել <<Շահ-Նան>>՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներմարզային հետևյալ երթուղում.
   1) <<Գորիս-Խնձորեսկ-Ն.Խնձորեսկ>>՝ ավտոմեքենաների մակնիշը՝ «ԳԱԶ322132-418», պետհամարանիշը՝ 3185L, «ԳԱԶ322132», պետհամարանիշը՝ 34OR445

2. <<Սիսիան – Դարբաս – Գետաթաղ – Լոր - Լեռնաշեն>>, <<Սիսիան-Շամբ-Լծեն>>, <<Սիսիան - Կապան>>, <<Սիսիան – Աշոտավան – Հացավան - Թասիկ>>, <<Սիսիան - Իշխանասար>>, <<Սիսիան – Աղիտու – Նորավան – Վաղատին - Որոտան>>, <<Գորիս - Որոտան>>, <<Գորիս – Շինուհայր – Հալիձոր - Տաթև>>, <<Գորիս – Խնածախ – Վաղատուր - Խոզնավար>>, <<Գորիս – Տեղ - Կոռնիձոր>>, <<Մեղրի - Ագարակ>>, <<Կապան - Դավիթ Բեկ>>, <<Կապան – Ճակատեն – Շիկահող – Սրաշեն - Ն.Հանդ - Ծավ>>, <<Կապան-

Անտառաշատ», «Կապան-Մեղրի», երթուղիների համար մրցույթային հայտեր չեն ներկայացվել:

3. Մրցույթային հանձնաժողովը օրենքով սահմանված կարգով մրցույթում չկայացած նշված երթուղիների համար կհայտարարի նոր մրցույթ:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետի հաստատմանը:

(Քվեարկության արդյունքները՝ կողմ՝5, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա):

Հանձնաժողովի նախագահ **Վ.Դավթյան**

անդամներ **Ռ.Ավետիսյան**

Ս. Աղաբեկյան

Ս.Ավետիսյան

Ս. Արզումանյան